

## «ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ» ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄՐՑԱՆԱԿՆԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄ

### ՀԱՐՈՂԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսին համաձայնութեամբ, Մայր Աթոռ Ս. էջմիածնի «Անուբէն Սեւակ» թանգարանին կողմէ կազմուած է «Յովհաննէս Եւ Իրմա Զիլինկիրեան մրցանակ»-ի յատուկ յանձնախումբ մը, որ վերոնշեալ թանգարանին համար պատրաստուող դիրքերու, ուսումնախրութիւններու կամ զանազան տեսակի հետազոտութիւններու մրցում մը կը կազմակերպէ, որուն առաջին հանդիսացողը պիտի ստանայ 3.000 (Երեք հազար) եւրոյի պարգև մը:

Նոյնպէս, յանձնախումբը Երեւանի Մանկավարժական համալսարանի աշակերտներուն միջին «Անուբէն Սեւակի» Հայրենիքի համար զոհուելու գաղափարին շուրջ» նիւթով մրցում կը կազմակերպէ եւ առաջին հանդիսացողին 1.000 (հազար) եւրոյի պարգև մը կը շնորհէ:

Մայր Աթոռի «Անուբէն Սեւակ» թանգարանի յանձնախումբը կազմուած է հետեւեալ անձերէ.-

1 - Անուբէն Միրզախանեան՝ նախագահ, Երեւանի Մանկավարժական համալսարանի տնօրին,

2 - Ասողիկ քահանայ Կարապետեան՝ տնդամ, Սուրբ էջմիածնի թանգարաններու տնօրին,

3 - Սեւակ քահանայ Մարիբէկեան՝ անդամ, Սուրբ էջմիածնի «Անուբէն Սեւակ» թանգարանի տնօրին:

Այս Երկու մրցանակներուն յանձնման հանդիսութիւնները ամէն տարի Անուբէն Սեւակի ծննդեան օրը՝ 28 Փետրուարին տեղի կ'ունենան, Սուրբ էջմիածնի «Անուբէն Սեւակ» թանգարանին մէջ:

Դիմումները լրել հետեւեալ հասցէին՝  
divanatun@etchmiadzin.am

Արժանապատի Սիփան քինչ. Գրիգորեանի ուշադրութեան  
Father Sipan Grigorian

Նշելով «Յովհաննէս Եւ Իրմա Զիլինկիրեան մրցանակ»-ի համար:

Դիմումի պայմանաժամն է (միայն այս անդամուան համար) 31 Յունի 2018 (†):

«ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵՒ ԻՐՄԱ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ ՅԻԾԱՑԱԿԻ ՏՈՒՆ»  
ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
20 Հոկտեմբեր 2017  
Cagnes-sur-Mer  
Ֆրանսա